

ցրվել, կալից կալից ուշ պրծանք, հիմա էլ քինթ պոռնոգ են անում տղերքը, ասում են քաղաք գնանք, երկու կրակի մէջ տապկուում ենք, ոչ այս կողմն ենք և ոչ այն, համա գիտես, ռաչպա-րի կեանքը կեանք չէ, այլ, ինչ ասեմ քաղքընու, որ ճշ մալի դարձն է քաղում, ոչ մուլքի, ոչ անծ-րեի և ոչ արեի, թէ Աստուած կամեցաւ, կարելի է քաղաք դանք ու այնտեղ մի կերպով կապրենք, ետոյ կերթանք:

Բանից դուրս է գալիս, որ ամենքը դժգոհ են իրանց վիճակից, որը ծուլութիւնից, որը անհաս-կացողութիւնից միշտ ձգտում են դէպի ան-հոգ, ապահով կեանքին, բայց միթէ կարելի է առանց աշխատութեան և զփուրկութեան կենթարկուել հասնել այդ ձգտումներին: «Աշխա-տութիւնը կեանք է, իսկ ժամանակը մեծ վար-ժապետ» ասել են մեզանից խնդրեցող: Ջանասի-րութեամբ կարելի է յաղթել զփուրկութեանը, իսկ ծոյլ, թոյլ և անհոգ մարդիկները վիճակը վատթարանում և սարսափելի աղքատութեան դուռը մատնում: Ժամանակը անլիտարբին է և պահանջում է այն, որ մենք դիմադրենք ճա-կատագրի կամ հանգամանքների տխուր հոսանքի առջև մեր եռանդով, տոկոսութեամբ և խելացի ձեռնարկութիւններով: Եթէ մանրամասնաբար նուազ առեւտուր էլ ունենայ, պէտք է սրբէ, մարքէ փոշին, պահպանէ և հսկէ իր ապրանքներին, առանց մեծ շահերի անկեղծութեան, անվտանգելի մարդկանց առջև չը բանայ իր մատենը, առեւտուր որքան և սահմանափակ լինի, գոնեա ազատում է ապ-րանքը փշաւարուց և անվերադարձ ապաւելկների կորստից և հոգսից: Եթէ արհեստագործը «աշխա-տաւորութիւն և չափաւորութիւն» ունենայ իր դռնից, անտարակոյս, առանց չըջանկատ դատո-ղութեան չի նախանձի մանրամասնաբար վիճակին: Եթէ գիւղացին գնահատէ իր դերը, ամենից եր-ջանիկը կը լինի մարդիկների մէջ: Ծուլութիւնը և անհոգութեանը դժբաղդութեան նախագահութիւն են: Մի այլ անգամ պատահեց, կոնսենսում նկարագրե-տեղական դասակարգերի պատկերները աւելի մանրամասնաբար:

Ա. Ա.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 4 ապրիլի

«Մշակի» 39 համարում ներքին լուրերի մէջ բարհաճել էիք յայտնել, որ ձեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի ծառայողները անհոգութեամբ և կամայական կերպով են վերա-բերվում կոնսիստորիայում գործ ունեցողներին, մանաւանդ խեղճ կանանց և չըջակայ գիւղերից եկողներին հետո:

Ինչ նպատակով է կամեցել լրատուն հաղորդել այդպիսի մի լուր, քանի որ նրանում ճշմարտու-թիւն չը կայ, չը գիտեմ, և պարտք էլ չեմ համա-րում ինձ քննելու այստեղ. այս միայն պէտք է ասեմ, որ մեր կոնսիստորիայի ծառայողների վարմունքը խնդրատուներին և գործ ունեցողներին հետ միշտ ողջ է և լինում է ըստ պատշաճի և առանձին նպատակներով: Իսկ եթէ լրատուն կամեցում է անկարելի այն խնդրատուներին վրա, որոնք զալիս են գիւղերից և երկար ժամանակ դեղերում են քաղաքում, կոնսիստորիայի ծառա-յողները չեն կարող պատասխանատու լինել այդ մասին. շատերի անունները քահանաների անհո-գութեամբ մետրիկական մատնում դրած չը լի-նելուն պատճառով քննութիւն է նշանակվում տեղական գործակալի ձեռքով և մինչև այս քըն-նութիւնը ստացվում է և համեմատվում մատենա-ների հետ, հարկաւ բաւական միջոց է անցնում. իսկ իրանք խնդրատու չեն կամեցում ըսել ծա-ռայողներին և վերադառնալ իրանց գիւղը և այնտեղ ապասել վիշապկանի ստացմանը, և այսպէս դեղերով քաղաքում չի հարկէ իրանք իրանց նեղութիւն և ծախսեր են պատճառում:

Ատենադպիր Գրիգոր Բեկմանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵԱՍՏԱՅԻՑ մեզ գրում են: «Վարտի 26-ին երե-կոյան, վախճանվեցաւ ստալիսպոլի տիկին Կա-տարինէ Պապովանց, թողնելով 100 հազար ռուբլու կարողութիւն: Ասում են որ հանգուցեա-լը կտակ էլ ունի արած, որով մի նշանաւոր գու-մար է թողել Նալայի մէջ եկեղեցի շինելու իր անուամբ»:

«Մշակի» ընթերցողները ծանօթ են արդէն

զենեակ Արադայի նորերս հրատարակված «Առ-տորիս Արմենի» վերնագրով գրքի բովանդակու-թեան հետ: Այժմ մեզ հաղորդում են ՊԵՏՏՐՈՒԹԻ-ԳԻՅՈՐ վիկտոր Աֆանասիսի վրա Արադա մտադիր է շարունակել հայոց պատմութեան ասպարիզում իր աշխատութիւնները նոր ուղղութեամբ, մա-նաւանդ եթէ քաջալերութիւն դառնի ինտելիգենտ հասարակութեան կողմից: «Այս օրերս, գրում է մեզ մեր թղթակիցը, ինձ պատահեց գտնվել պ. Արադայի մօտ. ձեռք վեց ժամ նա ինձ պա-հեց իր տանը և այդ ամբողջ ժամանակ նա սիրով խօսակցում էր միմյան հայոց պատմու-թեան վրա: Նա մեր ազգի պատմութեան վե-րաբերեալ գրութեան մի հարուստ ժողովածու ունի, որոնց թուում այնպիսի նիւթեր էլ կան, որոնցից դեռ ևս ոչ ոք գրեթէ չէ օգտվել մինչև այժմ. «Մի րօպէ նայեցէք Հայաստանի քարտէզի վրա, դիմեց ինձ պ. Արադա և երեկայեցէք ձեզ այն ազգերի խառնիճաղանձ հոսանքները, որոնք դարերից ի վեր եկել, ուղի տակ են տուել Հա-յաստանը ու անցել են այդ երկրով: Սակայն այսօր հայերը դարձեալ կան, այն ինչ նրանց ա-րիւնարբու թշնամի ազգերից շատերը իսպառ-ջնջվել, անհետացել են աշխարհի երեսից: Հա-յաստանը, շարունակեց նա, միշտ աշխատում էր իր դուրսը բարձր բռնել, աշխատում էր ասիա-կայն ազգերի շարքից բաժանվել, քանի որ արեւոյ Սիսիայում, կարելի է ասել, նա էր միակ քրիս-տոնեայ երկրից՝ Քրիստոնէութիւնն էր հայերի կրած հալածանքի ու նրանց կոտորածների պատճառը և այդ չը պէտք է մոռանալ քրիս-տոնեայ պետութիւնները: Որչափ, ուրեմն, հա-ւատ կայ այդ ազգի մէջ, որչափ հաստատամու-թիւն, որչափ առաքինութիւն»:

Ես վստահացայ մի քանի առարկութիւններ անել նրան, բայց պ. Արադա պատմական ուժեղ և անդիմադրելի փա-տեղով ապացուցանում էր իր ասածները և երե-ւում էր որ նրա ասածները ըզխում էին խոր և անկեղծ համոզմունքից և հայոց պատմութիւնն ու հայերի բնավորութիւնը խոճմաւոր կերպով ուսումնասիրելուց: «Այո, վերջապէս նա իր խօսքերը, հայ ազգը դանձ է կենդանի ազգերի շարքում: հայը արժանի է ապրելու, անխախտ պահելով իր կրօնը, իր հին ազգային սովորու-թիւնները և բնավորութեան ինքնուրոյնութիւնը»:

Երէկ ստացանք Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղա-քում հրատարակվող «Արեգակ» հայերէն շաբա-թաթերթի երկրորդ համարը: Ցաւում ենք, որ առաջին համարը մեր ձեռք չէ հասել: Շաբա-թաթերթը սարօրինակ տեսք ունի, որովհետեւ տպվում է վարդապետ թղթի վրա: «Արեգակի» խմբագիրը «Մշակի» ընթերցողներին յայտնի պ. Հ. Էլիինան է: Մեր ստացած համարը բաւական բազմակողմանի կերպով է կազմված: «Մշակի» ներկայ համարի արտաքին տեսութեան մէջ ար-տատուում ենք պ. Էլիինանի լրագրի առաջնոր-դող յօդուածը՝ որ շատ համակրելի մտքեր է յայտ-նում, մի և նոյն ժամանակ բողբոջում հայերի զաղթականութեան դէմ. «Արեգակը» հրատարակ-վում է Կ. Պօլսի հայոց բարձրագույն:

Կ. Պօլսի «Արեգակ» լրագրի վերջին համարում կարդում ենք հետեւեալը. «Երէկ, մարտի 24-ին Ղալաթիոյ խորհրդարանի սրահին մէջ տեղի ու-նեցաւ հայկական տառերու հնչման ծանօթ յանձ-նաժողովոյն առաջին նիստն: Ուսումնական խոր-հրդի աստիճանից Տրքի. Թիւրքական նիստը բացաւ, Ուսումնական խորհրդին կողմանէ շնոր-հակալութիւն յայտնելով Յանձնաժողովոյն ան-դամոց, որը ամբողջութեամբ ներկայ էին: Առա-ջին նիստն ի հարկէ նուիրուեցաւ կարծեաց փո-խանակութեան, այլ գոհացուցիչ էր տեսնել թէ Յանձնաժողովին բոլոր անդամը բացի Մատթիա Գարազաշեան էֆէնտիէ, սկզբամբ համաձայն էին խմբիւնեան Կարապետ էֆէնտիի բերած առա-ջարկութեան վրայ»:

ԿԱՐՍԻՑ, պ. Թով. Միխիլարեանցից ստացանք 3 ռուբլի յօդուած Զէյթունի հրկիզանքների: Նախկին 291 ռուբլի 45 կօպ. դումարի հետ, որ ունենիք խմբագրատանը, այժմ կունենանք յօդուած դէ-թունցիների 294 ռ. 45 կօ:

Ապրիլի 10-ին, կիրակի օր, ինչպէս մեզ հաղոր-դում են, հայ դերասանները խուճը կալուս-ծական բանիկ թատրոնում տալու է մի երե-կոյթ, որը գլխաւորապէս բաղկացած կը լինի

Բաֆֆիի «Սամուէլ» վէպից վերցրած կենդանի պատկերներից, որից յետոյ մի քանի դերասաններ կը կարգան և կը պատմեն, նոյնպէս և կը լինի երգ և տեղական երաժշտութիւն:

Թիֆլիսի դումայի ձայնաւոր Գ. Եւանգուլեան ներկայացրել է քաղաքային դումային մի գրաւոր առաջարկութիւն Թիֆլիսի զինապետների նախա-պատրաստական զուգընթաց դասատուների փակվե-լու հարցի առթիւ: Յայտնի է, որ ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան կարգադրու-թեամբ, ինչպէս բոլոր զինապետների, այնպէս և Թիֆլիսի զինապետների և պրօզիմադիայի նա-խապատրաստական և զուգընթաց դասատուները պէտք է փակվեն: Պ. Եւանգուլեան առաջարկում է դումային, որ նա լրագործութիւն տայ Թիֆլիսի քաղաքապետին զինելու ուր հարկն է և միջնոր-դելու, որպէս զի չը փակվեն մեր քաղաքի զին-նապետների նախապատրաստականները, առա-ջարկելով դրա հետ միասին, որ քաղաքը յանձն առնէ զուգընթաց դասատուների պահպանութեան ծախսի մի մասը: Մենք միանգամայն համակրում ենք այդ առաջարկութիւններին, որոնց մէջ յայտ-նած մտքի վերաբերութեամբ մենք անցեալ տարի մի քանի անգամ և մանրամասնաբար առիթ ենք ունեցել խօսելու. դարմանալի է միայն թէ ինչու մեր քաղաքային դումայի ձայնաւորները այսքան ուշ են ուշադրութիւն դարձնում այդ կարևոր հարցի վրա, որի մասին հարկաւոր էր հոգալ դեռ անցեալ տարի, և այն ժամանակ աւելի յոյս կա-րելի էր ունենալ հետևանքի մասին: Պ. Եւանգու-լեանի առաջարկութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագրիները, պէտք է ընկնի դու-մայում ապրիլի 18-ին:

Պետերբուրգի լրագրիները հաղորդում են, որ զինուորական միջնորդութեան ներկայացրած է երկու նախագիծ: Անդրկովկասում երկաթուղու երկու նոր գծեր անցկացնելու մասին, մէլը Մի-խայիլովի մինչև Ախալքալա, 73 վերստ երկաթու-թեամբ, իսկ միւսը Թիֆլիսից մինչև Ալեքսանդ-րօպոլ 215 վերստ երկաթուղեամբ: Առաջին գծի ծախսը հաշւած է 4,380,000 ռուբլի, իսկ երկ-րորդինը՝ 10,750,000 ռուբլի:

Ապրիլի 4-ին, կալուսական բանիկ թատրո-նում պ. Մեռնարդի կարգաց վրացիներ լեզուով մի դասախօսութիւն, վրաց նշանաւոր բանա-ստեղծ իշխան Գրիգոր Օրբելիանու կենսւրի և գրա-կան գործունէութեան մասին: Գասախօսութիւնը, որին լսելու համար հաւաքված էր բաւական հա-սարակութիւն, աջող անցաւ:

Զինուորական մուզեումին համար, որը կառուց-վում է Թիֆլիսում, Ալեքսանդրեան այգիում, իշ-խան Գոնգուլով-Կօրսալով պատուիրել է յայտնի նկարիչ Ալվազովսկուն նկարել երկու մեծ պատ-կերներ, որոնց նիւթը վերցրած պէտք է լինի ռուս-թիւրքական պատերազմից: Ալվազովսկին մարտի 26-ին Պետերբուրգից ուղևորվել է Ղրիմ, և Թեոդոսիա հասնելուն պէս պէտք է սկսի այդ պատկերների նկարելը:

Երեքշաբթի օր, ապրիլի 5-ին, Թիֆլիսի թատ-րոնում բարեգործական նպատակով կայացած ե-րեկոյթը գրաւեց թէն ոչ բազմաթիւ, բայց քա-ղաքի ամենաշնորհ հասարակութիւն: Շատ աջո-ղութիւն ունեցան պ. Կօլլինի գրած կենդանի պատկերները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՔ ԵՒ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Հայ ազգի ցրուեալ վիճակն ապագայի վրա խորհող ամէն ազգայնոյ համար խորին ցաւ մ'է անտարակոյս: Արեւ այլ ևս Հայուն համար դադ-րած է մարը մտնել, վասն զի Հայկայ սերունդն երկրագնդին ամէն կողմերն խուճըր ու բնկոր-ներ ունի այսօր: Կար ժամանակ մը յորում Ազ-գային զաղթականութեան հոսանքն ուրիշ կող-մեր կը վազէր. երբեմն Հնդկաստան, երբեմն Ռուսաստան և երբեմն այլ կողմեր: Սակայն այ-սօր Հայն իր աչքերը Գոյումպոսի երկրին է տըն-կած, որն ուր ուրիշ ամէն աշխարհէ աւելի յար-մարութիւն ունի Հայոց մտքերն զբաւելու: Ամե-րիկայի մեծ անունն, հարստութիւնն և մասնա-սիս

ւորապէս ոմանց անխորհուրդ գրութիւնքն դի-թած են Հայաստանցին, անանկ որ նորա մէջ մասնաւոր սէր մը կայ այսօր, ի հարկէ սնտոի յոյսերով, դէպի արևմտեան կիսագունտ գաղթե-լու, ուր այժմ բնակող Հայ տարրին, որ և է ժամանակէ աւելի, ստուարաբան խորին ուշա-դրութեան արժանի է անտարակոյս: Սակայն յոյժ ցաւալի պարագայ մ'է ոմանց անձանց ան-տարբերութիւնն այս կարևոր խնդրոյն առթիւ, որ սոսկալի ապագայի մը սպանալեաց տակ ձմիլ սկսած է ապաքէն, բայց աւելի ցաւալին է այն ամէն մասնաւոր համոզումն որը կը հաւատան տակաւին թէ Հայ մարդոց համար Ա-մերիկայ գաղթել օգտակար է Հայութեան, որը և կը սիրեն օրէ օր մերայնոց թիւը ստուարացած տեսնել: Նոր Աշխարհի մէջ: Սակայն փիլիսօֆայ մը ըլլալու հարկ չը կայ գիտնալու համար թէ Ա-մերիկան Հայ խումբն ալ Մայր—Հայրենիքի մէջ ապրող մեր Ազգի մէջ մասն կը կազմէ, որոյ ճա-կատագիրն զուշակի դիւրին բան մ'է արդէն: Այնէ դատ, ծանուցեալ ճշմարտութիւն մ'է թէ բաժանումն տկարութիւն կարողացել, ինչպէս որ միութիւնն զօրութիւն կը ծնի, և սակայն հիւ կրնայ ըսել թէ զաղթող Հայն իր ազգութիւնն կրնայ պահել միշտ: Խեղճ երկայն մազեր ունե-նալու է կարծելու համար թէ ովկիանու մէջ թափող գետի մը ջուրն իր քաղցրութիւնը կրնայ պահել միշտ....

Սակայն այսու հանդերձ Հայն, կրակի փայլքին վազող թիթեռնիկի մը նման, չի դադրել Ովկիա-նու այս եղբրն նաւարկելէ: Տարի չանցնելի, որ Հայրենիք կտրճ երիտասարդներ չի դրէ Ամերի-կացոց երկրին դոհ: Եթէ դժուարին է զաղթա-կանութիւնն կանգնել վերջապէս, գէթ նոցա մէջ սղգային ողին վատ պահելու համար ամէն ջան-քեր թող չի դադրին, որպէս զի սղքա ևս շուտ մը չարժանանալով այն բաղդին, որում արժանա-ցան ուրիշ ազգ. զաղթականութիւնը, օգուտ մը հասցունեն բազմակարօտ մեր երկրին: Սակայն նա է ճշմարտն հայրենասէրն, որ կը ջանայ թուր մի գետեղէն մեր զաղթային հասանց առ-ջն թող Հայն իր երկրի մէջ ծլի, հոն ապրի, հոն գործէ, հոն օգտակար լինի իր սիրելի աշ-խարհին և վերջապէս հոն ննջէ իր պապերու կըշ-տին մօտ....

Գիտնալու արժանի բան մ'է սակայն թէ Ամե-րիկայի Հայ խումբն ինչ կրնայ ընել յօդուտ մեր երկրին:—Խնդրէ մ'է սա, հարց մը այն հարցերու կարգին, որոց մէջ անդամով պատասխանելի կա-րելի չէ բնաւ: Այս խնդրով զբաղելն ապագային թողով՝ այս անգամ քանի մը խօսք ընել աւելորդ չենք համարել:

Մեր երկրի աղքատութեան մեծագոյն պատճա-ռն արհեստներու անկումն է. որչափ որ ար-հեստներն ինկան, աղքատութիւնն ալ այնչափ բռնացաւ ժողովրդի գրեթէ ամէն դասերուն վը-րայ, բնականաբար երբ ժողովուրդ մը աղքատ է, հացէ աւելի բանի մը փող չի կրնար խորհիլ, և երբ խեղճ. ձեռքն այդ ցամաք հացն ալ դիւրու-թեամբ չանցնելի, յուսահատութիւն կը լինի նո-րա մասն ու բաժինը այս աշխարհիս վրայ: Արդ դիւրին է մտածել թէ մեր երկրի բարեկաւութիւ-նըն ու յառաջադիմութիւնն կախում ունի ար-հեստներու վիճակէն, հետեւաբար ճշմարտութիւն է ըսել թէ մեր Հայրենիքն բարեկալք ու նա-խանձելի վիճակի մը հասցունելու համար նախ պէտք է արհեստներն կանգնել: Հացէ, ջուրէ և օ-ղէ գատ Հայրենիք ինչ ունի այսօր սեղիհական, ոչ ապաքէն մեր խեղճ ժողովուրդն իր միացեալ հարստութիւնն կուտայ օտարին ամէն պիտոյը դնելու համար: Ո՛վ չը գիտեր թէ, առանց տեղա-կան արհեստներն կանգնելու, եթէ աշխարհիս բոլոր հարստութիւնն մեր ժողովրդին տրուելու լինի, անշուշտ օր մը աղքատութիւնն նորէն պի-տի այցելէ մեր տուն:

Արդարեւ դիւրին բան մը չէ քիչ ատենի մէջ ծաղիկալ վիճակի մը վերածել մեր աշխարհի ան-կեալ արհեստներն, բայց և այսպէս ոչ անկարե-լիս Հոս անցողակի աւելորդ չենք սեպեր յիշել թէ Թոմքեայցին այս ինչ կամ այն ինչ արհեստն յառաջ մղելու համար պէտք չունի նորանոր մե-քնաներ հնարել, և ոչ ալ աշխատաւորի գործը դիւրացնելու համար պէտք կայ չղգեգործներ ձուլելու, վասն զի Արևմտցի արհեստագէտն զայ-նը չիմած ու պատրաստած է ապաքէն զորս Հայ-րենիք փոխադրելու համար կամք միայն կը պակ-սիս:

Բայց սակայն չի կարծեմ թէ Ամերիկայի Հայ գաղթականութիւնն կարող է այսպիսի մեծամեծ մեքենաներ ու շատ մը արհեստներ փոխադրել ի Հայրենիքը, այսու հանդերձ գիտնալու է նաև թէ Նոր Աշխարհի ազգայինը իրենց կարողութեան չափուն համեմատ՝ կրնան ի շահ իրենց ըստկին և յօդուտ ազգային յառաջդիմութեան ընել ինչ որ իրենցմէ չի յուսացուի թերևս լիթէ Ամերիկեան Հայ կուսմբն, որ հազար հինգ հարիւր անձերէ աւելի կրնայ հաշուել այսօր, առևտրական ընկերութիւն մը ունենայ, կարող է անշուշտ զրկել ի Թուրքիայ այնպիսի գործիքներ որք կըրնան շատ օգտակար լինի մեր արհեստաւորաց ու երկրին համար:

Շատ մեծ դրամազուլի մը պէտք չի կայ այսպիսի խորհուրդ մը իրականացնելու համար, և ի՞նչ չի գիտեր թէ այսպիսի ձեռնարկ մը ապագային կրնայ աւելի ընդարձակ գործեր ունենալ ազգային արհեստանոցներու հետ լիթէ աւելի հեռին երթալու լինիք կրնանք ըսել թէ Հայ ընկերութիւն մը, ի հարկէ հիմնական նպատակի մը վրայ շինուած միութիւն մը, կրնայ ոչ միայն գործիքներ, այլ և արհեստագէտներ ու գիտութիւններ փոխադրել ի Հայաստան՝ մեր մանկտեանց բարձրագոյն կրթութիւն մը տալով արեւմտեան համալսարանաց մէջ:

Ան խնդիր մը որոյ վրայէն թեթև կերպիւ անցնիլ անհոգ անձանց միայն յատուկ է և կը յուսանք, որ այս տողեր պիտի կրնան սակայն արեւմտեան գտնիլ հայրենասէր սրտերու մէջ... Ի՞նչ մեր երկաթագործը կտոր մը թանձր երկաթ ծակելու համար մեծ գոտարութեամբ երկայն ժամանակ վատէ, երբեմն առանց իսկ յաջողութեան, մինչդեռ փոքր ու ամառ գործիք մը կըրնայ նոյն գիւրդութեամբ կատարել: Ի՞նչ մեր տաղաւորը՝ փոսի մը մէջ մտած Նոյ Նահապետէն մնացեալ գործիքով մը իր աղքատ հիւսանձոյն չինէ, մինչդեռ Արեւմտեան ամառ գործիքներով հրաշալի արտադրութիւններ կընէ, առանց մեծ գոտարութեանց: Ի՞նչ վերջապէս մեր երկրագործը և այլ ամէն արհեստաւորը չարարութիւն յուսման, քանի որ կարելի է սոցա աշխատութիւնն դիւրացնել այնպիսի գործիքներով որոց արտադրութիւնը աւելի շատ և շատ աւելի գեղեցիկ են մերկաներէն, եթէ երբեք սոցա կրնան համեմատութեան դրուել:

Սակայն ինչ կարելի է տխուր ակնարկ մը չը ձգել կարգ մը խորհելու ու գործելու կարողութիւն ունեցող անձանց արարքներուն վրայ, որք չեն հաճիր պահ մը իսկ մտածել ընդհանուր շահուն համար ի մէջ այլոց բաղմաց կրնանք մատնանիլ ցոյց տալ հայ միաբնակներու առաքելաներն որք նուիրական պաշտօն մը ունին (‘ ‘ ‘) Աստուծոյ խօսքն ու Գրիստոսի Աւետարանն հայ ժողովրդեան տանկու, գոր ինչ մենք դարերէ ի վեր ունէինք և աւելիք ապագայն Սակայն սոցա պարտին ջալ գիտնալ նաև թէ ոչ միայն բանիւ կեցցէ մարդ: Այ հերիք է հայ պատուելիք Աստուծոյ խօսքն տանին մեր ժողովրդին, քիչ մը ալ հաց թող ջանան զրկել անթի հասարակութեան, վասն զի ոչ միայն բանիւ կեցցէ մարդ, այլ և հացիւ...

(Արեգակ)

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՆԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 26 մարտի

Ամենախորին տխրութիւն մը պատած է Պոլսոյ հայութիւնը, այն տխրութիւնը որ սրտերը կտոր կընէ: Ով կուզես տես Պոլսոյ մէջ, խեղճ պանդուխտը թէ հարուստ վաճառականը, եւրօպական կրթութիւն առած երիտասարդը թէ տգէտ գործաւորը, փափկասուն ֆրանսերէն խօսող ազգիւնը թէ հիւսուկոյ պառնա կինը, ամենք ալ կը խօսեն Պէշլիկթաշի գերեզմանատան հարցի մասին:

Նախորդ նամակաւ ըսած էի թէ Պէշլիկթաշի գերեզմանատան խնդիրն յարութիւն առաւ վերստին Այս յարութիւնն այնքան անակնունչի էր որ Գաղ. և Կրօ. ժողովոց անդամներն յայտարարած էին թէ Պէշլիկթաշի գերեզմանատան խնդիրը վերջացած է: Մարտի 21-ին երկուշաբթի օր հրաւեր կը խրկուի Պատրիարքի կողմանէ Պոլսի զբանուող եպիսկոպոսաց որպէս զի մարտ 23-ին չորեքշաբթի օր Ղալաթիա կետը, վարժարանի մէկ սենեակին հաւաքուին խառն ժողովոյ հետ միասին խորհրդակցելու: Նոյն օրն որոշեալ ժաման եպիսկոպոսը կը գտնուին անդէ Կրօ. ժողովո-

վէն միայն խորհման սրբազան և երկու վարդապետը կան: Տասն և մէկ անդամ բացակայ են: Իսկ ներկայներէն մին Գովգի վարդապետ Սաւաճեան բողոքելով ժողովին դէմ կը ձգէ կը մննի, որով Կրօնական ժողովին կը մնան երկու անդամ: Իսկ եպիսկոպոսներն հետեալըն են որոց անուններն պէտք է մնան խորհման Մկրտիչ—Կերճակեան Արիստակէս—Նար-Պէյ խորէն—Սիմօն Սեֆերեան—Տիմոթէոս Սափ-րիչեան—Փիլիպպոս Նաճառեան—Գարեգին Սըր-ւանձտեան—Պատրիարք Թարութիւնը բացակայ է: Իսկ իւրիշներն երիտասարդ Գեորգ վարդապետը, Պատրիարքական փոխանորդ, նորա կողմանէ կը նախագահէ ժողովոյն—Կը կարդացուի Կաթողիկոսական կոնդակը, ժողովականք ոտքի վրայ: Այդ կոնդակն զրուած է ի պատասխանի Թարութիւն Պատրիարքի այս տարւոյ փետր. 9 ամսաթիւ անձնական նամակի մը առ Կաթողիկոսն յորմէ կը խնդրէ Պատրիարքը այսպիսի կոնդակ մը: Կաթողիկոսին կոնդակը, որ գրված է ներկայ թուականի փետրվարի 28-ից, համար 86, և ուղղած է Թարութիւն պատրիարքին, վերջա-նում է հետեալ խօսքերով. «Պատուիրեմք զի փոխադրելով գոտարութիւն ի սրբալայրս ազգա-յին գերեզմանատանց, զգետինն դայն բացառա-բար յանուն Ազգիս նուիրել Արքայական Անձին Նորին Վեհափառութեան»:

Ետ ընթերցման կոնդակի եպիսկոպոսը խօսք կառնուին ինչ հարկ մի առ մի գրել—Բաւակա-նանանք խորհման եպիսկոպոսի խօսքերովն:—խորհման կընէ թէ՛ Գաղկեդոնի ժողովն ընդու-նելու համար լըր կաթողիկոս եկեղեցական ժո-ղովոյ ներկայեց առաջարկութիւն մը, բայց Մար-տիոս սարկաւազ ոտքի կանգնած մի առ մի ջրեց կաթողիկոսի խօսքերն և եկեղեցական ժո-ղովոյ սարկաւազին ետեւն գնաց:—Իսկ ես, կըսէ խորհման, չեմ ուզեր ըլլալ այդ Մարտիոս սար-կաւազը—Ինչ որ կուզէք ըրէք, ես կը հետեւիմ ձեզ:—Նար-Պէյ, ինչ պիտի ընենք, պիտի հպա-տակինք կըսէ:—Նոյնը Սրբանձտեանց: Միւս ե-պիսկոպոսներուն անունները չըսեմք, վասն զի նշանակութիւն չունին:—Գաղ. ժողովոյ անդամ-ներն ալ կը ձգեն կը փախչին Միայն Սիմօն պէյ կը մնայ երկու անդամակցով:—Իսկ պ. Մերեմ-Գուլի իբր ատենապետ Ազգ. ժողովոյ կը զեզերի անդ որսը ձեռքէ չը հանկուտ: Ինքն է որ զադ-տնապէս կը մամանկից այս ամեն եղելութիւննե-րուն լայնակոպոսաց ստորագրել կուտան թուղթ մը գոր մինչև ցարդ հրապարակ չեն հանած: Պ. Մերեմ-Գուլի ինք կը խմբագրէ այն գրերն ոյք պիտի հաղորդուին լրագրաց, և անմիջապէս Պատրիարքարանի պաշտօնեայնները կըրթան լրա-գրաց խմբագրատուններն և պաշտօնական յայ-տարարութիւնները կը հաղորդեն: Կաթողիկոսա-կան կոնդակը կը հաղորդուի թիւրք և եւրօպա-կան լրագրաց: Եւ թիւրք լրագիրները կը հաղոր-դեն թէ՛ արդէն Պատրիարքին (որ հիւանդ էր) թաքրիւր արձուի պալատը խրկուած է ոսկերաց փոխադրութիւնն որոշած լինեն հաղորդելով:

Ես չեմ կարող մօտաւոր գաղափար մը տալ այն վշտին, այն զայրոյթին որ կը տիրէ:—Բայց պէտք է ըսել որ ոչ մի փոքրիկ սրտնեղութեան նշան կը տեսնուի ընդդէմ թրքաց, ամենեւին Ամեն ոք ինքնին կը տրամադրանէ:—Անցեալ տարի Կայսրն ազնուաբար վարուելով ստորագրեալ պաշտօնէից մեքենայութիւններն խորտակեց և հը-րամայեց որ գերեզմանատունը գեղեցիկ պարտէզ մը ըլլայ, արդ Կայսր մը իւր այդպիսի մէկ հրա-մանը ետ չառնուր: Եւ արդարեւ տարի մէկ ոչ մէկ հրաման կայ Կայսրի կողմանէ. սակայն ստորա-դասեալ պաշտօնեայններ օգուտ չաղելով Մերեմ-գէկ եպիսկոպոսն մէկ գործէն, միանալով մի ըս-նի հայերու հետ անպատճառ կուզեն այդ գերեզ-մանատունը: Հայերն իրենց շահերն ունեն.—ինչ պատասխանատու են հայերն:—Կայսրն ըսաւ որ պարտէզի վերածուի այդ գերեզմանատունը, տա-րի մէկ ինչու չենք վերածել:—Վասն զի մեր ազ-գային գործոց զլուխ գտնուողներու շահն այնպէս կը պահանջէ: Իսկ այժմ երբ եպիսկոպոսաց ստո-րագրութեամբ, Պատրիարքի կնքով վաւերացեալ թուղթերով կը դիմէ հայ եկեղեցականութիւնն, ինքն աբարաբար, առ. ոչլայտն արձուի և պաշտօնաւոր որ գերեզմանը յանձնուի պալատան:—Ե ոչ իսկ Կայսր կը ներկայացնեն աղբիւրներն: Ինչ բանով մեղաւոր են թիւրքերը:—Ժողովուրդն այս պարզ արամաբանութիւնը կընէ: Երկու օրէ ով որ Սրբանձտեանց Գարեգին ե-պիսկոպոսը կը տեսնէ, կըսէ անվերայ այս խօսքը

«տոքը կոտորէ չը դայիր Պօլսիս Գանի մը օր ալ համբերելու կարող չէիք»:—Նար-Պէյին անունը չեն ուզեր արտասանել:—Իսկ խորհմանին ձեռքն և ոչ իսկ վարդապետները կը համբուրեն:—Միայն Հայկական եպիսկոպոսն է որ չէ ստորագրած. Ժո-ղովոյ չէ դացած և կը մնայ կանգուն:—Մանկու-նի եպիսկոպոսն ալ կը մնայ չէզոք:—Ո՞վ կը յու-սար թէ հայոց ազգին շահերը Հայկական ու Ման-կունի եպիսկոպոսներէն պիտի պաշտպանուին:

Կըսենք ինչ կը խօսէր անցեալ տարի խորհման, ինչ կը խօսի այսօր:—Ստորագրութիւնը տուած առաջ յաջորդ օրը խորհմանին հետ տեսնուեցայ, նախ իրեն յայտարարեցի որ իբր պարզ հայ մը ալ ևս կարող չեմ համբուրել այն ձեռքն որ այն-պիսի ստորագրութիւն մը գրած է: Բայց պէտք է խոստովանիմ որ սրտէս շատ մեղքացա խեղճ ծե-րունին Գուսանատ, լըհալ, վշտահար դէմը ունէր: Ուր որ գացած էր, ով որ ալ տեսած էր, ամենքն ալ անխորի երես դարձուցած են իրմէ: Սարսա-փահար մնացած է:—Ինչ կը կարենա խորհմանի նմանին մենք կը սիրենք, կը պաշտենք երբ եկեղեցւոյ ու ազգի շահերը կը պաշտպանեն, բայց ոչ այն օրն երբ, եթէ ոչ չարութեամբ, բայց դէթ պարզութեամբ գործիք կըլլան ուրիշներու Միթէ կը կարծեն որ մենք ոչնաւոր պէս իրենց ետեւն պիտի երթանք:—Առ այժմ այդքան:

Ազգ. ժողովն երէկ գումարեցաւ, այն ձախորդ տպաւորութեան ներքե յորում կը գտնուին Պօլսոյ հայ երկու օրէ ի վեր:—Ժողովոյ ատենապետը զգաց թէ Պատրիարքի դէմ ցոյցեր պիտի լինին, հետեալ օր ինքն առաջ անցաւ Կարգաց Երուսա-ղէմի միաբանութեան մէկ նոր տեղեկագիրը: Կար-գաց Ազգ. վարչութեան տեղեկագիրն որք կառա-ջարկէին թէ Թարութիւն Պատրիարքի Երուսղէմ երթալու հարկն անհրաժեշտ է:—Գաղ. ու Կրօ. ժողովը չէին ուղեր նախաձեռնութիւնը Ազգ. ժո-ղովոյ տալ:—Վիճաբանութիւնը բացուեցաւ: Բայց վիճաբանութեան հարկ չը կար. ամեն երեսփո-խանի աչքէ կրակ կը ցատկէր. ամենքը սիրով ու միաբանութեամբ կուզէին պահ մը աղատիլ այդ Թարութիւն Պատրիարքին: Խորհման և Նար-Պէյ եպիսկոպոսներն ամօթահար լինելով ժողովի չէին եկած, սակայն Սիմօն եպիսկոպոս որ ոչ խելք ունի, ոչ ամօթ, եկած էր:—Ամենքը անիէ երես դարձուցին:

Կը մնար ժամանակն որոշել. ամեն ոք կուզէր որ շուտ ստորագրուի թուղթն, որ Մազպաթ կը կոչուի: Բայց օր- տարածամեալ էր. ուսմը ալ կը վարանէին, ցոյց կրնայ վատ հետևանքներ ու-նենալ կընէին:—Բայց վերջապէս համաձայնու-թիւն կար Մազպաթուն ստորագրելու: Բայց կըր-նանք հաւատալ որ երեսփոխանական ժողովը խաղը եկաւ Երբ բաւական հոգեմեղան երեսփո-խանը ատենապետը պ. Մերեմ-Գուլի, որ ըստ օրինի իրաւունք չունի առաջարկութիւն բերելու, ինքնին առաջարկ մը կը ներկայացնէ որ հետե-ւեալն է:

«Ազգ. ժողովը կը որոշէ ամեն. տ. Թարութիւն սրբազանի Երուսղէմայ Պատրիարքական ընտ-րութեան Մազպաթան ստորագրել և իւր Վարչու-թեան կը յանձնարարէ ըստ այնմ մղում տալ պաշտօնական դրօժողութեանց:

«Ամեն տ. Թարութիւն սրբազան կը մնայ Պատ-րիարք և Պօլսոյ մինչև որ Կայսերական իրատէն վաւերացնէ Երուսղէմայ Պատրիարքական ընտ-րութիւնը»:

Կը հասկանաք ինչ ըսել է:—Թարութիւն Պատ-րիարք կը մնայ Կ. Պօլսոյ Պատրիարք որքան ա-տեն ուզէ:—Ուրեմն նորէն Ա. Բ. Գ. սկսեմք նո-րէն:—չառապենք տապալելու այդ աղետաբեր ան-ձը:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

—Կ. Պոլսից մեզ գրում են հետեալը. մար-տի 26-ից: «Այս առաջ ֆրանսիական թերթերը կը հաղորդեն, թէ հայ քանադակեալ պէտք է աքաղուին ի Պէշլիկթաշի, Թրիբուլիսի կողմերը»:

—Ինչպէս դուռն են Բերլինից, Իշխան Բիւմարկ խորհրդակցում է իր մեծաւորներին հետ որ հրա-ժարակամի վերաբերութեամբ Բերլինում լուր է պտտում, որ Բիւմարկի յաջորդ կը նշանակվի Բօզ-գէնքախ:

—Ի նկատի ունենալով այն անաղին ձայների բազմութիւնը, որ ստանում է մի քանի նահանգ-ներում գէնքալ Բուլանթէ, Փարիզի մի քանի լը-րագիրներ առաջարկում են փոխել ձայնատուութեան

այժմեան մի քանի սխառնները, որոնք շատ են նպաստում դանաղան անձանց համար հարկաւոր ժամանակը շատ ձայներ հաւաքելուն:

—Բուլիսիայից եկած ամենավերջին տեղեկու-թիւնները հաստատում են, որ այնտեղ զեղա-կան ազգաբնակիւթիւնը յիւրաի մեծ շարժումներ է անում. շատ տեղ հրաժարվում են հարկ վճա-րելուց և բուռն կերպով բողոքում են կառավա-րութեան դրած դրած խիստ միջոցների դէմ:

—Միւսն թագաւորը, ինչպէս հեռագրում են Բէլգրադից, դէմ է Նատալիա թագուհու Սերբիա վերադառնալուն:

—Իշխան Բիւմարկի հրաժարականի վերաբերու-թեամբ խօսելով, գերմանական մի քանի լրագիր-ները զարմանալի լուրեր են հաղորդում, որով ու-զում են հաստատել, որ Բիւմարկ ընդդէմ չէ Բատտենբերգի և Իշխանուհի Վիկտորիայի ամուս-նութեան, և որ կանցէլլի հրաժարականի պատ-ճառը բողոքովն ուրիշ խնդիրներ են: Այդ լրագիրները պնդում են, որ վերջ ի վերջոյ Բիւ-մարկ կը հրաժարվի, եթէ կը գործադրեն այն վարչական րէֆորմները, որոնք արդէն առաջա-դրված և հաւանութիւն են գտած Ֆրիդրիխ Կայս-րից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ԲԵՐԼԻՆ, 4 ապրիլի: Կայսրի առողջութիւնը վատացաւ. նա այժմ ունի բրնձիտ և դող:

ՊԵՏՏ, 4 ապրիլի: Այն փոխառութիւնը, որը կառավարութիւնը մտադրէ է պահանջել պատ-դամաւորների ժողովից, 50 միլիոն է հասնում:

ԲՈՒՄԻՍԼԱՅԱՅ, 4 ապրիլի: Ֆերբանցի մօտ տեղի ունեցաւ արհեստի ընդհարում յուզված գիւղա-ցիների և զօրքի մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: Մշակված է մուրհա-կային նոր կանոնադրութեան նախագիծ: Այդ նախագիծը զօրութեամբ, ի միջի այլոց իրաւունք է տրվում մարդու գնացած կանանց չըլլաւառու-թեան մէջ չը մտնող բանիկներ տալ մուրհակնե-րով առանց իրանց մարդկանց համաձայնութեան: Այն անձանց, որոնք իրանց ուսումը կաւարտեն հիմնական նահանգական արհեստագիտական տեխ-նիական դպրոցներում, մտադրութիւն կայ զին-ւորագրական ծառայութեան վերաբերութեամբ միջնակարգ դպրոցների արտօնութիւններ տալու: Բէլայական դպրոցների նախագիծով կազմակեր-պութիւնը 1889 թւի ամառվանից առաջ տեղի չի ունենայ, որովհետեւ այդ հարցը ենթարկվելու է տեխնիկների ժողովի քննութեան:

ՓԱՐԻՅ, 5 ապրիլի: Ժվի Ֆերրի երէկ Եպիս-կոս մի ճառ ասեց, որի մէջ Բուլանթէին անուա-նեց պատմամբ զինուոր Արդարացնելով պատե-հականների կուսակցութիւնը, հետեւորը խոստո-վանեց, որ այժմեան պատգամաւորների ժողովը ի չարը գործ դրեց միախտրական ճգնաժամերը: Դրա-նից յետոյ մի քանի խօսք ասելով ի պաշտպանու-թիւն սենատի, Ֆերրի ասեց. «Այժմեան ճգնա-ժամը ցոյց տուեց, որ ուղղակի ձայնատուութիւնը անսխալական չէ, և մատնանիլ է անում միայն պատգամաւորների ժողով ունենալու վտանգի վրա, և սենատի պահպանութեան անհրաժեշտութեան վրա»:

Ներկայ դրութիւնը հետեւորը գեկտեմբերի 2-ի նամակիւն համարեց: Դրանից յետոյ Ֆերրի այն միտքը յայտնեց, որ ինքը պաշտպանելու է Ֆլօ-կէի միախտրութիւնը, բայց խնդրում է նրանից՝ Բուլանթիով մի վերաբերութեամբ ներգործական դի-մադրող դիրք բռնել և խնդրում է Ֆլօկից ստեղ-ծել հանրապետական կենտրոն կեսարական և պրիքսիդիական շարժման դէմ: Կեսարականութե-ան վերադարձը, ասեց հետեւորը, առաջ կը բերի արտաքին պատերազմ, մենք կը կորցնենք Եւրօպայի յարգանքը, եթէ 40 տարւայ ընթաց-քում երկրորդ անգամ ընդունենք միջակ մարդուն:— հանձարի տեղ, և Կատլինան—Վալինդտօնի տեղ: Ապա Ֆերրի յայտնեց, որ ինքը հպարտա-նում է, որ Բուլանթիստների լրագիրները յար-ձակվում են իր անձնաւորութեան վրա, ընդու-նում և հրաւեր է կարդում բոլոր բարի ըաղաք-ցիներին կոխ մղել կեսարականութեան դէմ, որը միշտ թողել է ամօթալի և արիւնոտ հետքեր: Ֆրանսիայի պատմութեան մէջ:—Հիւսիսային դե-պարտամենտի ընտրողներն ուղղած շնորհակա-լական նամակի մէջ Բուլանթէ կրկնում է, որ ին-

